

**TERMS AND CONDITIONS OF SUBSCRIPTION TO
MOBILE TELECOMMUNICATION AND OTHER
RELATED SERVICES**

**ԲԶԶԱՅԻՆ ԴԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԱԿԻՑ
ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Recitals

- A. Pursuant to an agreement with the Republic of Nagorno Karabakh, Karabakh Telecom Closed Joint-Stock Company (hereinafter referred to as the “Operator”) has been assigned to operate and develop telecommunications networks and to provide telecommunication services in the Republic of Nagorno Karabakh.
- B. The Operator is implementing and operating a GSM cellular network, which will be used for providing mobile telecommunication services.

Ներածական մաս

- Ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն (ստորև՝ «Օպերատոր») նշանակված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հեռահաղորդակցության ցանցերը շահագործելու ու զարգացնելու և հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու համար:
- Բ. Օպերատորը իրագործում և շահագործում է GSM բջջային ցանցը, որն օգտագործվում է բջջային հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման համար:

1. Agreement

1.1 This document defines the terms and conditions of subscription to GSM mobile telecommunication and other related services provided by the Operator. Physical persons or legal entities may apply to subscribe to such services by completing and submitting to the Operator an application form of an established format. The application shall be deemed approved by the Operator upon issuing a SIM card to the applicant (the “Subscriber”), in which case the application along with these terms and conditions, as may be amended from time to time by the Operator, shall constitute a binding agreement (the “Agreement”) between the parties.

1.2 The Agreement comes into effect once the Operator receives from the Subscriber all required documents and guarantees, accepts the payment of the connection fee and activates the SIM card.

2. Services

2.1 The Subscriber shall be entitled to use the SIM card to receive mobile telecommunication and other related services within the available technical capability of the GSM cellular networks operated by the Operator.

2.1.1 within the available technical capabilities of the GSM cellular networks operated by the Operator, the Subscriber shall have the right to use the related other services (data transmission, mobile internet, short messages (SMS), ring back tone (RBT), video call, etc.)

These conditions are a public offer for concluding the subscription agreement for the provision of electronic communication and other related services.

By accepting (acceptance) this offer, these conditions become a part of the signed subscription agreement

1 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1.1 Սույն փաստաթուղթը սահմանում է Օպերատորի կողմից մատուցվող GSM բջջային հեռահաղորդակցության և հարակից այլ ծառայությունների համար բաժանորդագրության պայմաններն ու դրույթները: Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել այդ ծառայությունների բաժանորդագրության համար՝ լրացնելով և Օպերատորին ներկայացնելով դիմումի սահմանված ձևը: Դիմումը համարվում է հաստատված՝ Օպերատորի կողմից դիմողին («Բաժանորդ») SIM քարտ տրամադրելուն պես, որի դեպքում դիմումը, սույն պայմանների և դրույթների հետ մեկտեղ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել Օպերատորի կողմից, կազմելու է կողմերի միջև պարտավորեցնող Պայմանագիր:

1.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում անմիջապես Բաժանորդից բոլոր պահանջվող փաստաթղթերը և երաշխիքները ստանալուց, միացման վճարն ընդունելուց և SIM քարտն ակտիվացնելուց հետո:

2 Ծառայություններ

2.1 Բաժանորդն իրավունք ունի օգտագործել SIM քարտը բջջային հեռահաղորդակցության և հարակից այլ ծառայություններ ստանալու համար՝ Օպերատորի կողմից շահագործվող GSM բջջային ցանցի հասանելի տեխնիկական հնարավորությունների սահմաններում:

2.1.1 Օպերատորի կողմից շահագործվող GSM բջջային ցանցի հասանելի տեխնիկական հնարավորության սահմաններում Բաժանորդն իրավունք ունի օգտագործել հարակից այլ ծառայություններ (տվյալների հաղորդում, շարժական համացանց, կարճ հաղորդագրություններ (SMS), հետզանգի մեղեդի (RBT), տեսազանգ ծառայություն (video call) և այլն):

Սույն պայմանները հանդիսանում են էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման բաժանորդային պայմանագիր կնքելու համար հրապարակային օֆերտա:

Սույն օֆերտան ընդունելու (ակցեպտավորելու) պահից սույն պայմանները հանդիսանում են

between Operator and Subscriber; therefore the Subscriber is obliged to make payments for using mobile telecommunication and other related services.

- 2.2 The Operator may engage in cooperation agreements with operators of other GSM networks, which may enable use of the SIM card allocated to the Subscriber in such other networks.
- 2.3 The SIM card shall be operated by a compatible terminal, which shall be obtained by the Subscriber at his/her own expense and risk.
- 2.4 The Operator shall assign a unique number (the "telephone number"), which will be used for identifying the SIM card allocated to the Subscriber and for providing services to the Subscriber, and hereinafter terms "SIM card" and "telephone line" used interchangeably shall have the same meaning.
- 2.5 The telephone number may be changed by the Operator upon request of the Subscriber as per the rules and conditions of the Operator.
- 2.6 Subscriber shall not have the right to transfer the SIM card to a third party without a prior written consent of the Operator.

3. Rights and Obligations of the Operator

- 3.1 The Operator shall have the right to:
 - 3.1.1 define and alter from time to time rules and instructions for making and receiving telephone calls and using other mobile telecommunication services;
 - 3.1.2 impose short term limitations on duration of calls and continuity of services in case of technical necessity;
 - 3.1.3 destroy any transcripts and/or information about telephone calls and other services provided if unclaimed by the Subscriber for more than 6 (six) months.
 - 3.1.4 retain the amount of the deposit to the Subscriber's account over 12 months in case the line has been fully disconnected minimum twice within the past 1 year as a result of bad credit status.
- 3.2 The Operator shall be obliged to:
 - 3.2.1 provide and maintain good performance of the telecommunication network and continuity of calls and services within the available technical capacities of the Operator;
 - 3.2.2 provide all necessary information and instructions for making and receiving telephone calls and using other mobile telecommunication services;
 - 3.2.3 keep the information possessed by the Operator about any communications made over the Subscriber's telephone line confidential for any third parties except for the cases when provision of such

Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված բաժանորդային պայմանագիր, հետևաբար՝ Բաժանորդը պարտավորվում է հեռահաղորդակցության և հարակից ծառայությունների օգտագործման դեպքում կատարել վճարային պարտավորությունները:

- 2.2 Օպերատորը կարող է համագործակցության պայմանագրեր կնքել այլ GSM ցանցերի օպերատորների հետ, որը հնարավորություն կտա օգտագործել Բաժանորդին հատկացված SIM քարտը այլ ցանցերում:
- 2.3 SIM քարտը պետք է շահագործվի համատեղելի սարքի միջոցով, որը ձեռք է բերվում Բաժանորդի կողմից իր սեփական հաշվին և ռիսկով:
- 2.4 Օպերատորը պետք է տրամադրի եզակի համար («հեռախոսահամար»), որը կօգտագործվի բաժանորդին հատկացված SIM քարտի ինքնությունը հաստատելու և Բաժանորդին ծառայություններ մատուցելու համար, և այսուհետև փոփոխաբար օգտագործվող «SIM քարտ» և «հեռախոսագիծ» հասկացությունները ունեն միևնույն նշանակություն:
- 2.5 Հեռախոսահամարն Օպերատորի կողմից կարող է փոխվել բաժանորդի դիմումով՝ համաձայն Օպերատորի կողմից սահմանված կանոնների և պայմանների:
- 2.6 Բաժանորդն իրավունք չունի փոխանցել SIM քարտը երրորդ անձին՝ առանց Օպերատորի նախապես գրավոր համաձայնության:

3 Օպերատորի իրավունքներն ու պարտավորությունները

- 3.1 Օպերատորն իրավունք ունի:
 - 3.1.1 սահմանել և ժամանակ առ ժամանակ փոփոխել հեռախոսազանգեր կատարելու և ստանալու, ինչպես նաև այլ բջջային հեռահաղորդակցության ծառայություններից օգտվելու կանոններն ու կարգը.
 - 3.1.2 կարճաժամկետ սահմանափակումներ դնել զանգերի տևողության և ծառայությունների անընդհատության վրա՝ տեխնիկական անհրաժեշտության պարագայում.
 - 3.1.3 ոչնչացնել բաժանորդի հեռախոսագծով կատարված հեռախոսազանգերի և մատուցված այլ ծառայությունների մասին որևէ տեղեկություն և/կամ վերձանում, եթե Բաժանորդը վերջին 6 (վեց) ամսվա ընթացքում չի պահանջել դրանք:
 - 3.1.4 12 ամսով երկարաձգել երաշխիքային գումարի հաշվանցումը բաժանորդի հաշվին՝ վերջին մեկ տարվա ընթացքում վճարումների անպատշաճ կատարման պատճառով հեռախոսային գծի առնվազն երկու անգամ երկկողմանի անջատման դեպքում:
- 3.2 Օպերատորը պարտավոր է:
 - 3.2.1 տրամադրել և ապահովել հեռահաղորդակցության ցանցի բավարար աշխատանքը և Օպերատորի առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում՝ հեռախոսազանգերի և ծառայությունների անընդհատությունը.
 - 3.2.2 տրամադրել հեռախոսազանգեր կատարելու, ստանալու և այլ բջջային հեռահաղորդակցության ծառայություններից օգտվելու կարգը և անհրաժեշտ տեղեկությունները.
 - 3.2.3 պահպանել բաժանորդի հեռախոսագծի միջոցով կատարված որևէ հաղորդակցության վերաբերյալ Օպերատորի մոտ պահվող տեղեկությունների գաղտնիությունը ցանկացած երրորդ կողմի համար,

information is required by law or for protection of rights and lawful interests of the Operator;

3.2.4 provide to the Subscriber detailed bills for telephone calls and other services provided over the Subscriber's telephone line upon presentation of a personal identification document by the latter or to an authorized person upon presentation of a notarized power of attorney within the available technical capacity of the Operator.

3.2.5 credit the deposit back to the Subscriber's account after 12 months, if the latter makes the payments properly during this period.

4. Rights and Obligations of the Subscriber

4.1 The Subscriber shall have the right to:

4.1.1 To request to provide services properly.

4.2 The Subscriber shall be obliged to

4.2.1. observe any rules and regulations set by the Operator, as well as any rules and regulations set by the operators of other GSM networks in which the SIM card is used;

4.2.2. provide timely payment of the bills and invoices submitted by the Operator;

4.2.3. maintain the SIM card in proper condition;

4.2.4. abstain from use of the services provided by the Operator for any purposes not compatible with the law;

4.2.5. abstain from resale of the services provided by the Operator or rendering telecommunication services using the SIM card provided by the Operator without a written consent of the Operator;

4.2.6. prevent use of the SIM card with any incompatible devices;

4.2.7. prevent interaction of the SIM card with any equipment that may affect safe and reliable operation of telecommunication networks and equipment.

4.3. Any unauthorized use, misuse, loss or damage of the SIM card, including natural wear and tear, shall be the sole responsibility of the Subscriber, and the Subscriber shall have no right to claim any indemnity in such events.

4.4. The Subscriber shall promptly notify the Operator in writing in case of the SIM card being lost, damaged or stolen, and the Operator shall take prompt actions to suspend services over the SIM card. The Subscriber, however, may be held responsible for any use of the SIM card within 24 hours after notifying the Operator. The Operator shall have the right to charge certain fees for replacing lost or damaged SIM cards.

բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկությունների տրամադրումը պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է Օպերատորի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար.

3.2.4 Բաժանորդի կողմից իր անձը հաստատող փաստաթուղթ կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից նուտարական կարգով վավերացված լիազորագիր ներկայացնելու դեպքում, Օպերատորի տեխնիկական հնարավորությունների սահմաններում, տրամադրել հեռախոսազանգերի և Բաժանորդի հեռախոսագծով մատուցված այլ ծառայությունների մանրամասն հաշիվը (վերծանումը):

3.2.5 12 ամսից հետո երաշխիքային գումարը հաշվանցել Բաժանորդի հաշվին՝ վերջինիս կողմից այդ ընթացքում վճարումները բարեխիղճ կատարելու պայմանով:

4 Բաժանորդի իրավունքներն ու պարտավորությունները

4.1. Բաժանորդն իրավունք ունի.

4.1.1. պահանջել պատշաճ կերպով մատուցել ծառայությունները:

4.2. Բաժանորդը պարտավոր է.

4.2.1 հետևել Օպերատորի կողմից սահմանված բոլոր կանոններին և կարգերին, ինչպես նաև բոլոր կանոններին և կարգերին՝ սահմանված այլ GSM ցանցերի օպերատորների կողմից, որոնցում SIM քարտն օգտագործվում է.

4.2.2 ապահովել Օպերատորի կողմից ներկայացված հաշիվների ժամանակին վճարումը.

4.2.3 SIM քարտը պահպանել պատշաճ վիճակում.

4.2.4 ձեռնպահ մնալ օրենքին հակասող ցանկացած նպատակով Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններն օգտագործելուց.

4.2.5 զերծ մնալ առանց Օպերատորի գրավոր համաձայնության Օպերատորի կողմից մատուցած ծառայությունները վերավաճառելուց և Օպերատորի կողմից տրամադրված SIM քարտի օգտագործմամբ հեռահաղորդակցության ծառայություններ տրամադրելուց.

4.2.6 զերծ մնալ SIM քարտի օգտագործումը որևէ անհամատեղելի սարքի հետ.

4.2.7 զերծ մնալ SIM քարտի փոխազդեցությունից որևէ սարքավորման հետ, ինչը կարող է ազդել հեռահաղորդակցության ցանցերի կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա:

4.3. Բաժանորդին հատկացված SIM քարտի ցանկացած չարտոնված կամ սխալ օգտագործումը, կորուստը կամ վնասումը, ներառյալ բնականոն մաշվածությունը, լրկ Բաժանորդի պատասխանատվությունն է, և Բաժանորդն իրավունք չունի նման դեպքերում պահանջել որևէ փոխհատուցում:

4.4. Բաժանորդը պետք է անհապաղ գրավոր ծանուցի Օպերատորին SIM քարտը կորելու, վնասվելու կամ գողացվելու դեպքերում, որպեսզի Օպերատորն անհապաղ գործողություններ ձեռնարկի այդ SIM քարտով մատուցվող ծառայությունները կասեցնելու ուղղությամբ: Սակայն Բաժանորդը կարող է պատասխանատվություն կրել Օպերատորին ծանուցելուց հետո 24 ժամվա ընթացքում SIM քարտ որևէ օգտագործման համար: Օպերատորը իրավունք ունի վճար գանձել կորցրած կամ վնասված SIM քարտերը

4.5. The Subscriber commits to immediately inform the Operator of any sudden deficiency or emergency that might occur to his subscription in addition to any changes of the personal information that might affect this Agreement.

5. Liability

5.1. The parties to this Agreement shall be liable for non-performance of their obligations under this Agreement.

5.2. The Operator shall bear no responsibility for any service interruption or any other malfunction due to emergencies or contingencies beyond the Operator's control. However, the Operator shall undertake reasonable measures to promptly restore proper services.

5.3. Under no circumstances the liability of the Operator for any disconnection, interruption or malfunction shall exceed the amount of the monthly subscription charge, unless a special written arrangement is made between the parties beyond this Agreement.

5.4. The Subscriber shall be responsible for obtaining and reconciling detailed bills of telephone calls from the Operator and in case of any discrepancies shall immediately notify the Operator in writing. If no such notification is received by the Operator within 1 (one) month after the end of a service month the respective detailed bill shall be deemed approved by the Subscriber. Submission of any objections about the detailed bills shall not give the right to the Subscriber to delay any payments under this Agreement.

6. Payments, tariffs, other terms

6.1. Provision of services by the Operator over the Subscriber's telephone line shall be subject to rates and fees defined by authorities. The tariffs are available to the Subscriber at all service centers of the Operator.

6.2. The Operator may from time to time change the foregoing terms and conditions for any services provided over the Subscriber's SIM card. Advance notifications to the Subscribers about such changes shall be made by placing a public announcement on www.kt.am website.

The Subscriber shall have the right to unilaterally terminate the Agreement by delivering a written notice to the Operator within 1 (one) month from the first date of announcement in case if he/she disagrees with the new terms and conditions, and if no such notice is received by the Operator, the changes shall be deemed

վերականգնելու համար:

4.5. Բաժանորդը պարտավորվում է անմիջապես տեղեկացնել Օպերատորին ցանկացած անսպասելի անսարքության կամ վթարի մասին, որոնք կարող են ի հայտ գալ իր բաժանորդագրության հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրին վերաբերող անձնական տեղեկություններում ցանկացած փոփոխությունների մասին:

5 Պատասխանատվություն

5.1. Սույն Պայմանագրի կողմերը պատասխանատու են սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման համար:

5.2. Օպերատորը պատասխանատվություն չի կրում իր հսկողությունից դուրս վթարի կամ չնախատեսված դեպքերի հետևանքով ծառայությունների մատուցման որևէ ընդհատման կամ խափանման համար: Այնուամենայնիվ, Օպերատորը պարտավոր է ձեռնարկել ողջամիտ միջոցներ կանոնավոր ծառայությունների շուտափույթ վերականգնման համար:

5.3. Որևէ պարագայում Օպերատորի պատասխանատվության չափը ցանկացած անջատման, ընդհատման, խափանման համար չի կարող գերազանցել ամսական բաժանորդավարձի գումարը, եթե սույն Պայմանագրից դուրս հատուկ գրավոր պայմանավորվածություն ձեռք չի բերվել կողմերի միջև:

5.4. Բաժանորդը պատասխանատու է Օպերատորից հեռախոսազանգերի մանրամասն հաշիվը ստանալու և ստուգելու համար և որևէ անհամաձայնության դեպքում պետք է անմիջապես գրավոր ձևով ծանուցի Օպերատորին: Եթե Օպերատորի կողմից ծառայությունների մատուցման անսվան հաջորդող 1 (մեկ) ամսվա ընթացքում նման ծանուցում չի ստացվել, ապա համապատասխան մանրամասն հաշիվը կհամարվի Բաժանորդի կողմից հաստատված: Մանրամասն հաշիվների վերաբերյալ որևէ առարկությունների ներկայացումը Բաժանորդին իրավունք չի տալիս ուշացնել սույն Պայմանագրով սահմանված որևէ վճարում:

6 Վճարումներ, սակագներ, այլ պայմաններ

6.1. Բաժանորդի հեռախոսագծով Օպերատորի կողմից ծառայությունների մատուցումը կատարվում է լիազորված մարմնի կողմից սահմանված սակագներով: Սակագները Բաժանորդի համար հասանելի են Օպերատորի սպասարկման բոլոր կետերում:

6.2. Օպերատորը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխել Բաժանորդի SIM քարտով ծառայությունների մատուցման պայմաններն ու դրույթները: Նման փոփոխությունների մասին ծանուցումները պետք է նախապես կատարվեն հրապարակային հայտարարության ձևով www.kt.am վեբ-կայքում տեղադրելու միջոցով:

Բաժանորդն իրավունք ունի միակողմանի կարգով դադարեցնել սույն Պայմանագիրը հայտարարության առաջին հրապարակման անսաթվից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում գրավոր ծանուցում ներկայացնելով Օպերատորին,

accepted by the Subscriber.

- 6.3. The Operator shall have no obligation to coordinate any terms with the Subscriber.
- 6.4. The Operator shall deposit with the respective GSM payment/service centers the information about the charges of each month and the total amount due by the Subscriber by the 5th day of the ensuing month and the full amount shall be settled by the Subscriber by the 15th day of that month
- 6.5. The Subscriber shall inquire about his/her dues from the respective GSM payment/service center of the Operator and shall pay the full amount due within the terms defined in sub-point 6.4.
- 6.6. The Subscriber gives his confirmation for making payments by the third parties against the services, provided to him/her under this contract.
- 6.7. The Operator does not provide any information related to the debt of third parties, requested by phone. Such information may be provided in company's service centers, to authorized person based on the procedure stipulated under the legislation.
- 6.8. In case of delay in settling any payments beyond the payment terms defined in sub-point 6.4, the Operator shall be entitled to discontinue any services or disconnect the Subscriber's line at its own discretion and without any notice of any form. The Operator may charge a fee for recommencing any services or reconnecting a disconnected line.
- 6.9. Reaching the credit limit, the line should be disconnected by the Operator, except the cases, of technical failure (the time and duration of updating information on the services used depends on the billing system and network load and other technical circumstances). Consequently, the amount of balance can exceed the credit limit and disconnection of the line can be delayed.

6.10. Exceeding the credit limit does not release the Subscriber from his/her financial obligations before their entire implementation.

7. Terms of Validity and agreement termination

- 7.1. The Agreement shall be deemed concluded for unlimited time and shall remain effective until terminated.
- 7.2. The Operator shall have the right to unilaterally terminate this Agreement by issuing a written one-

այն դեպքում, եթե նա համաձայն չէ նոր պայմանների և դրույթների հետ, և եթե այդպիսի ծանուցում ստացված չէ Օպերատորի կողմից, ապա փոփոխությունները կհամարվեն ընդունված Բաժանորդի կողմից:

- 6.3. Օպերատորը պարտավոր չէ Բաժանորդի հետ համաձայնեցնել որևէ պայմաններ:
- 6.4. Օպերատորը պետք է համապատասխան վճարային կենտրոններին տրամադրի Բաժանորդի յուրաքանչյուր ամսվա հաշիվների գումարի և պարտքի ընդհանուր գումարի մասին տեղեկատվությունը՝ մինչև հաջորդ ամսվա հինգերորդ օրը, և ամբողջ գումարը պետք է վճարվի Բաժանորդի կողմից մինչև այդ ամսվա տասնհինգերորդ օրը:
- 6.5. Բաժանորդը պետք է տեղեկանա Օպերատորի համապատասխան GSM վճարային կենտրոնից/սպասարկման կետերից իր կողմից վճարման ենթակա գումարի մասին և մարի այդ ամբողջ գումարը 6.4 ենթակետով սահմանված ժամկետում:
- 6.6. Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը իր օգտին երրորդ անձի կողմից, սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց կատարել վճարումներ:
- 6.7. Օպերատորը հեռախոսագանգի միջոցով սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց երրորդ անձանց պարտքի վերաբերյալ տեղեկություններ չի տրամադրում: Նման տեղեկություններ կարող են տրամադրվել օրենքով սահմանված կարգով լիազորված անձանց՝ Ընկերության սպասարկման կենտրոններում:
- 6.8. Որևէ վճարում 6.4 ենթակետով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Օպերատորն իրավունք ունի իր սեփական հայեցողությամբ և առանց որևէ ծանուցման դադարեցնել ցանկացած ծառայություն կամ անջատել Բաժանորդի հեռախոսագիծը: Ցանկացած ծառայության վերականգնման կամ անջատված գծի միացման համար Օպերատորը կարող է գանձել վճար:
- 6.9. Հաշվի սահմանաչափը լրանալու դեպքում հեռախոսագիծը ենթակա է անջատման Օպերատորի կողմից, բացառությամբ տեխնիկական պատճառներով պայմանավորված դեպքերի (օգտագործած ծառայությունների մասին տվյալների թարմացման ժամկետը և տևողությունը պայմանավորված են ցանցի և բիլինգ համակարգի ծանրաբեռնվածության աստիճանից և այլ տեխնիկական հանգամանքներից), որոնց հետևանքով հաշվի գումարը կարող է գերազանցել սահմանաչափը, իսկ հեռախոսագծի անջատումը հետաձգվել:
- 6.10. Հաշվի սահմանաչափի գերազանցումը չի ազատում բաժանորդին՝ ունեցած ֆինանսական պարտավորություններից մինչև դրանց ամբողջությամբ կատարումը:

7 Գործողության ժամկետը և պայմանագրի լուծումը

- 7.1. Սույն Պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով և ուժի մեջ է մինչև դադարեցումը:
- 7.2. Օպերատորն իրավունք ունի միակողմանի կարգով վաղալետ լուծել սույն Պայմանագիրը մեկ ամիս

month advance notice to the Subscriber. The Subscriber shall have the right to unilaterally terminate this Agreement by issuing a written one-week advance notice to the Operator.

7.3. The Operator shall have the right to unilaterally terminate this Agreement without any notice of any form and disconnect the telephone line without any obligation to reserve the Subscriber's telephone number under his/her name, if the Subscriber has delayed any payment for more than 1 (one) month beyond the terms defined in sub-point 6.4

7.4. Termination of this Agreement in any case shall not relieve the parties from their payment obligations arising from this Agreement.

8. Final Provisions

8.1. Any disputes between the parties shall be settled amicably through negotiations and in case of failure shall be subject to resolution by court in accordance with the laws and regulations of the Republic of Nagorno Karabakh.

8.2. By signing this Agreement the Subscriber gives his permission to send letters to the e-mail address represented in the requisite by the Subscriber. The letters will enlighten the activity of the Mobile Operator by news, advertisements, notifications and/or suggestions.

9. Requisites of the Parties

ԲԱԺԱՆՈՐԴ / SUBSCRIBER

Էլեկտրոնային հասցե / e-mail

Երկրորդական ստորագրություն / signature

առաջ գրավոր ծանուցելով Բաժանորդին: Բաժանորդը իրավունք ունի միակողմանի կարգով վաղակես լուծել սույն Պայմանագիրը մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով Օպերատորին:

7.3. Օպերատորն իրավունք ունի միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ առանց որևէ ծանուցման, և անջատել հեռախոսագիծը՝ առանց Բաժանորդի հեռախոսահամարը նրա անունով պահպանելու պարտավորության, եթե Բաժանորդը 6.4 ենթակետով սահմանված ժամկետից ավելի քան 1 (մեկ) ամսով ուշացրել է որևէ վճարում:

7.4. Պայմանագրի լուծումը ցանկացած դեպքում չի ազատում կողմերին սույն Պայմանագրից բխող իրենց վճարային պարտավորություններից:

8 Եզրափակիչ դրույթներ

8.1. Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում ենթակա են լուծման դատական կարգով՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրության:

8.2. Ստորագրելով սույն Պայմանագիրը՝ Բաժանորդը տալիս է իր թույլտվությունը վավերապայմանների մեջ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստին ստանալ էլեկտրոնային նամակներ Օպերատորից՝ վերջինիս գործունեությունը լուսաբանող տեղեկություններով, ներառյալ նորություններ, գովազդային նյութեր, ծանուցումներ և/կամ առաջարկներ:

9 Կողմերի վավերապայմանները

ՕՊԵՐԱՏՈՐ / OPERATOR

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ / "Karabakh Telecom" CJSC
Հ/Հ / Bank Account: 247703333330000,
ՀՎՀՀ / TIN: 90015278
097-200-111, 111
www.kt.am,

Ստորագրություն / signature